# ՍԳՈ ՍՐԱՀԻ ՆԱԽԱՍՐԱՀՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

02.07.2018թ.

1. Ննջեցյալի հարազատների կողմից ընտրված պատասխանատու անձը արարողությունների ողջ ընթացքում գտնվում է սգո սրահում, հանգանակությունների սեղանի մոտ և կազմակերպում է սգակիր ժողովրդի մուտքը սգո սրահ:
2. Յուրաքանչյուր այցելու, իր ազատ կամքով, կարող է դրամական նվիրատվություն կատարել, որը կարող է արձանագրվել պատասխանատու անձի կողմից:
3. Խրախուսելի է, որ փոխան ծաղկեպսակի կամ այլ նյութական նվիրաբերման (օղի և այլն), կատարվի դրամական նվիրատվություն:
4. Դրամական այս նվիրատվությունը հանգուցյալի հանդեպ հարգանքի, երախտիքի ու շնորհակալության ձև է: Ուստի, անկախ հանգուցյալի ընտանիքի սոցիալական վիճակից, հարգանքի արտահայտման այս ձևը մերժել չի կարելի:
5. Հավաքված գումարներն ամբողջությամբ, համապատասխան ցուցակով հանդերձ, հանձնվում է հանգուցյալի ընտանիքին:
6. Հավաքված գումարով կատարվում է թաղման և գերեզմանի ծախսերը:
7. Ննջեցյալի ընտանիքը կարող է նաև ննջեցյալի հանդեպ հարգանքի, երախտիքի ու շնորհակալության սգակիր ժողովրդի այս նվիրատվությունից տրամադրել դպրոցի, մանկապարտեզի, զորանոցի, անապահով ընտանիքի կամ անհատ մարդկանց՝ որպես մատաղ ննջեցյալի հոգու խաղաղության համար:

Վայոց ձորի թեմի Առաջնորդարան

Վայք համայնքի ավագանի

# ՀՈԳԵՃԱՇԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

## ՎԱՅՔԻ Ս.ՏՐԴԱՏ ԵԿԵՂԵՑԻ

02.07.2018թ.

Հոգեճաշը հանգուցյալի հոգու հանգստության համար տրվող մատաղ է: Ուստի, հոգեճաշի սեղանին կարող են դրվել մատաղի համար ընդունված ուտելիքներ:

Վայքի ս. Տրդատ եկեղեցու հոգեճաշի սրահում արտոնվում են ավանդական հետևյալ ուտելիքները (մեկ հոգու հաշվարկով).

1. Հաց
2. Պանիր
3. Կանաչի, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), թթու
4. Ձեյթուն
5. Հավ
6. Լոբի
7. Խաշլամա, կարտոֆիլ
8. Օղի (նովոստի, 0.5 լ, 980 դր.)
9. Ջուր, ջերմուկ, լիմոնադ

Հոգեճաշին մասնակցող մեկ հոգու համար սննդամթերքի, սննդամթերքի պատրաստման, մատուցման և հարակից ծախսը կազմում է ընդհանուր 3300 դրամ:

Հոգեճաշի սեղանը ղեկավարում է քահանան, եթե ննջեցյալը Հայ եկեղեցու զավակ է:

Բոլոր գրավոր պայմանավորվածություններն ու վճարումներն արվում են մոմավաճառի մոտ: Մոմավաճառի տված համապատասխան կտրոնը ներկայացվում է քահանային կամ խոհարարին՝ առնվազն մեկ օր առաջ: Ցանկալի է, որ հոգեճաշ պատվիրողներն իրենք կատարեն սննդամթերքի գնումները՝ խոհարարի հետ միասին: Այդ դեպքում պարտավոր են իրենց կողմից առնվազն մեկ պատասխանատու ներկայացուցիչ նշանակել խոհանոցի և մատուցման աշխատանքները կազմակերպելու համար: Սննդամթերքը պատվիրատուի կողմից գնվելու դեպքում միայն խոհանոցային և դահլիճի ծախսերը մեկ հոգու համար հաշվարկվում է 800 դրամ:

Բոլոր դեպքերում, հոգեճաշի սեղանին նշված ցանկից դուրս այլ կերակրատեսակներ կամ անհարգի ճոխություններ չի թուլատրվում:

Վայոց ձորի թեմի Առաջնորդարան

Վայք համայնքի ավագանի

# ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՍՐԱՀ

# ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

# ՎԱՅՔԻ Ս.ՏՐԴԱՏ ԵԿԵՂԵՑԻ

02.07.2018թ.

1. Եթե տանը կամ հիվանդանոցում գտնվող մահամերձ հիվանդը կամ հիվանդի հարազատները ցանկանում են, ապա քահանան այցելում է հիվանդին, կատարում խոստովանություն և մեղքերի թողություն և տալիս վերջին հաղորդություն:
2. Հանգուցյալին ննջեցյալների հոգեհանգստյան արարողությունների սգո սրահ տեղափոխելու համար անհրաժեշտ է քահանային տեղյակ պահել հնարավորինս շուտ:
3. Սգո սրահի զբաղված լինելու դեպքում քահանան պարտավոր է ննջեցյալին առժամյա դնել եկեղեցու ներսում և կատարել համապատասխան արարողությունները:
4. Եթե ննջեցյալի հարազատները ցանկանում են, ապա քահանան այցելում է այն տունը, ուր գտնվում է ննջեցյալի մարմինը, տեղում կատարում է <<տան կարգ>>, որից հետո ննջեցյալը տեղափոխվում է սգո սրահ: Հիվանդանոցում կամ դիահերձարանում <<տան կարգ>> չի կատարվում:
5. Քահանան ննջեցյալի հարազատների հետ քննարկում և պլանավորում է թաղման կարգի արարողություններն ու ժամանակացույցը:
6. Սգո սրահում քահանան, մինչ ննջեցյալի տեղափոխումը գերեզմանատուն, հավուր պատշաճի կատարում է հոգեհանգստյան արարողություններ՝ աղոթք, խնկարկություն, սաղմոսասացություն, շարական:
7. Քահանան, նախապես պայմանավորված ժամին, սգո թափորն առաջնորդում է գերեզմանատուն, կատարում <<թաղման կարգ>> և <<գերեզմանի օրհնություն>>:
8. Վերոնշյալ բոլոր արարողությունների ժամանակ, ինչպես սգո սրահում, այնպես էլ գերեզմանատանը, ննջեցյալի հարազատների կամ սգակիր ժողովրդի կողմից քահանային ոչինի չի վճարվում, որևէ նվիրատվություն չի կատարվում:
9. Քահանայի ծառայության, եկեղեցու սպասարկող և օգնող անձնակազմի, սգո սրահի, տարածքի և կոմունալ վճարների համար ննջեցյալի հարազատները ս. Տրդատ եկեղեցու մոմավաճառին նախապես վճարում են ընդհանուր 45.000 դրամ և կտրոնը ներկայացնում քահանային:
10. Նշված 45.000 դրամը թեմի կողմից բաշխվում է հետևյալ կերպ. ա) 25.000 դրամ տրվում է քահանային իր ծառայության, սգո սրահում վառվող մոմերի և խունկի դիմաց: Եթե արարողություններին մասնակցում է նաև սարկավագ, ապա քահանան այս գումարից մասհանում է անում նաև սարկավագին: բ) 20.000 դրամ մուտք է արվում թեմի հաշվին՝ շենքի և տարածքի պահպանության, մաքրության, բարեկարգման և կոմունալ ծախսերի (էլ.էներգիա, ջուր, աղբահանություն և այլն) համար:

    Եթե ննջեցյալի հարազատները չեն ցանկանում, որ քահանան հոգեհանգստյան արարողություններ կատարի, ապա գումարն ամբողջովին (45.000 դրամ) մուտք է արվում թեմի հաշվին՝ ս. Տրդատ եկեղեցու հոգևոր, եկեղեցական, սոցիալական ծրագրերի իրականացման համար:

Վայոց ձորի թեմի Առաջնորդարան

Վայք համայնքի ավագանի